



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
20-Ի ԹԻՎ 4 ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը, նպատակ ունենալով հնարավորին արդյունավետ կազմակերպել արտակարգ դրության ժամանակահատվածում Համալսարանի կրթական աշխատանքները, դասավանդողների աշխատանքները գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի կարգավորումներից ելնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Համալսարանի ուսանողների, աշխատողների և Համալսարանի հետ առնչվող անձանց առողջության իրավունքների ապահովման կարևորությունը.

1. 2020 թվականի մարտի 16-ից համարել դադարեցված Համալսարանի կրթական գործունեությամբ պայմանավորված աշխատանքները, դասընթացները, բացառությամբ Համալսարանի քոլեջի և ավագ դպրոցի՝ մինչև Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ նախատեսված արտակարգ դրության ավարտը՝ 2020 թվականի ապրիլի 14-ը ընկած ժամանակահատվածով:

2. Համալսարանի բոլոր ֆակուլտետներում, կլինիկական օրդինատորայում, սովորողների համար սահմանել արձակուրդային շրջան՝ 2020 թվականի մարտի 16-ից



մինչև ապրիլի 14-ը ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի հուլիս օգոստոս ամիսների համապատասխան օրերի փոխարեն:

3. Համալսարանի բոլոր ֆակուլտետների, կլինիկական օրդինատուրայի, բացառությամբ Համալսարանի քոլեջում և ավագ դպրոցում դասավանդողների, դասախոսական և օժանդակ կազմի համար սահմանել արձակուրդային շրջան՝ 2020 թվականի մարտի 23-ից ապրիլի 14-ը ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի հուլիս օգոստոս ամիսների համապատասխան օրերի փոխարեն և ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը սահմանված կարգով տրամադրելու պայմանով:

4. Հաշվի առնելով ապրիլի 14-ից հետո Հայաստանում համաճարակային իրավիճակի հնարավոր զարգացումները, արտակարգ դրության երկարացման դեպքում՝ հանձնարարել Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանին՝ “ZOOM” էլեկտրոնային հարթակի միջոցով մշակել հեռավար կրթության գործիքակազմ:


5. Համալսարանի կլինիկական օրդինատուրայի սովորողների ուսուցումը հետաձգել՝ մինչև Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ նախատեսված արտակարգ դրության ավարտը:

Թույլատրել կլինիկա օրդինատորներին Համալսարանի ամբիոնի կլինիկական բազայում իրականացնել կամավորական աշխատանքներ, եթե կլինիկական բազայի ղեկավարը (կամ այլ լիազորված անձ) չի առարկում և կամավորական աշխատանքների ընթացքը համարել կրթական գործընթացի մաս:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր Արմեն Մուրադյանին:

Համալսարանի Գիտական խորհուրդը կոչ է անում սովորողներին և աշխատողներին աջակցել Համալսարանի պատասխանատուներին՝ չնախատեսված, արտակարգ դրության պայմաններում միասնական ուժերով հաղթահարելու ստեղծված իրավիճակը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԶԱՐՏՈՒՂԱՐ



Տ.Տ.ԱՎԱԳՅԱՆ